

ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՅՅԱՆ — «Զանգեզուրի հայերը», ԳԱ հրատարակչություն, Երևան, 1969 թ., տպաքանակը՝ 2000, 334 էջ:

Ստ. Լիսիցյանի գիտական վաստակը նշանակալից տեղ ունի հայ ազգագրության ասպարեզում: Նա Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ տարբեր շրջաններում տարիներ շարունակ հավաքել ու գրի է առել մեծ քանակությամբ նյութեր, որոնք աչքի են ընկնում լայն ընդգրկումով և բազմազանությամբ:

Ներկա մեմագրությունը՝ «Զանգեզուրի հայերը» ամփոփում է XIX դ. վերջերի և XX դարի սկզբների ազգագրական հարուստ նյութերը, որոնց մեծ մասը հեղինակը հավաքել է 1920—30-ական թվականներին:

Աշխատությունը նվիրված է նախատվետական Զանգեզուրի հայ բնակչության նյութական ու հոգևոր մշակույթի, տնտեսության, զբաղմունքների, երկրագործության, արհեստների, աշխատանքային պրոցեսների ու գործիքների, տնային տնտեսության, սոցիալական, ընտանեկան և իրավական հարաբերությունների ուսումնասիրությանը: Հատուկ գլուխներում զետեղված են աշխարհագրական տեղեկություններ Զանգեզուրի, նրա հայ բնակչության էթնոգենեզի մասին, ինչպես նաև մի շարք մարդաբանական ու լեզվագիտական տվյալներ: Գիրքն ունի 180 տախտակից բաղկացած հարուստ նկարազարդում, որը տպագրված է պոլիգրաֆիական բարձր որակով:

Մեմագրության տեքստը տպագրության

է պատրաստել հեղինակի դուստրը՝ պատմական գիտությունների դոկտոր Սրբուհի Լիսիցյանը. խմբագրել են ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը և Սրբուհի Լիսիցյանը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ — «Նամակահի», ԳԱ հրատարակչություն, Երևան, 1969 թ., տպաքանակը՝ 1000, 624 էջ:

Հայ ազգային-լուսավորական շարժման նշանավոր ներկայացուցիչ Ստեփանոս Նազարյանը մամակագրական մեծ կապեր է ունեցել հայ և օտարազգի հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների հետ: Այս ժողովածուում ընդգրկված են նրա մահից հետո մամուլում հրապարակված, տարբեր արխիվներում և մասնավոր անձանց մոտ պահվող 281 մամակներ, որոնք բավական նյութ են տալիս Նազարյանի լուսավորական գործունեության և նրա ժամանակաշրջանի ուսումնասիրության համար, վեր հանում նրա պատմական դերը XIX դարի 40—70-ական թվականների հայ ազգային ու հոգևոր կյանքի ու մասնավորապես գրական մոր լեզվի զարգացման գործում, ինչպես նաև բացահայտում են Նազարյանի ունեցած վերաբերմունքը հասարակական հոսանքների պայքարի նկատմամբ:

Ստ. Նազարյանի մամակները գրված են հայերեն, ռուսերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով (գերմաներեն և ֆրանսերեն գրած մամակների կողքին տրվում է նաև հայերեն թարգմանությունը): Նամակները դասավորված են ժամանակա-

գրական կարգով՝ սկսած 1829 թ. մինչև 1879 թ.:

Ժողովածուն կազմել, ծանոթագրել և առաջաբանը գրել է բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Նանումյանը:

ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆ — «Երկերի ժողովածու», հատոր յոթերորդ, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1989 թ., տպաքանակը 10.000, 475 էջ:

Ներկա հատորը ամփոփում է Հ. Պարոնյանի երգիծական մանրապատումները ու փոխառությունները: Հատորի նյութերը վերցված են «Մեղու», «Թատրոն», «Լույս» և «Խիկար» հանդեսներից (1872—1888)՝ համալրված Փարիզից ստացված նյութերով, որոնք մինչև այժմ տեղ չեն գտել հեղինակի ժողովածուներում:

Հատորը պատրաստել և ծանոթագրել է բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ս. Մանուկյանը:

Ռ. Մ. ՄԻՐԶՈՅԱՆ — «Տնտեսական հաշվարկի և շահութաբերության հարցերը Հայաստանի սպառողական կոոպերացիայում», ԳԱ հրատարակչություն, Երևան, 1989 թ., տպաքանակը՝ 1000, 224 էջ:

Այս գրքում հեղինակը անդրադառնում է տնտեսական հաշվարկի դերին ու նշանակությանը սոցիալիստական հասարակարգում և կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում: Հիմնավորում է նրա օրյեկտիվ տնտեսական կատեգորիա և տնտեսավարման հիմնական մեթոդ լինելը, պարզաբանում տնտեսական հաշվարկի կիրառման առանձնահատկությունները և զարգացման պատմությունը սպառողական կոոպերացիայում: Հայաստանի սպառողական կոոպերացիայի օրինակով վերլուծում է առևտրական գործունեության շահութաբերության վրա ազդող գործոնները և նրա իջեցման պատճառները, մատնանշում տնտեսական հաշվարկի և շահութաբերության բարձրացման ուղիները: